

Զմամառու վանքի Հնատիպ գիրքերու ցուցակագրման ուղղութեամբ
կատարուած աշխատանքներու ներկայացում և
Զմամառու վանքի վարչութեան հետապնդած նպատակը

Հ. Մովսէս Վրդ. Տօնանեան
Զմամառու Տիրամօր Վանք

ի

Գերաշնորհ, Գերյարգելի,
Արժանապատիւ Հայրեր
ՀՀ Մշակոյթի Նախարար
Ազնուափայլ Տիկ. Յասմիկ Պօղոսեան,

Մեծայարգ Պրն. Ատենապետ
Յարգարժան հիւրեր և սիրելի ներկաներ

Զմամառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան և Յաւագին Տիրամօր
վանքին անունով, իմ ողջոյնի խօսքը կ'ուղղեմ ձեր բոլորին, մաղթելով
ձեզի քաջառողջութիւն և բազմաբեղուն գործունէութիւն:

Գոհութիւն և փառք կու տամ Աստուծոյ, որ առիթը ընծայեց այս
հոգեպարար մթնոլորտին մէջ միասնաբար քննարկելու այնպիսի
հարցեր, որոնք կ'օժանդակեն հայ գրի ու գրականութեան պահպանման և
տարածման, մեր երիտասարդութեան եւ ուսանողութեան մօտ, ի Մայր
Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Այսօր այստեղ հայ գիրքն ու միտքը, այլ խօսքով հայութիւնը ներկայ է իր
ամբողջական պատկերով, իր հոգեւորականներով, մտաւորականներով,
իր մտահոգութիւններով, գաղափարներով, իր երագներով, յոյսերով և
ծրագիրներով: Յարգանք ու պատիւ Հայ մշակոյթի, Հայ գիրի ու
գրականութեան, հայեցի դաստիարակութեան նուիրուած բոլոր
հայորդիներուն:

Հայաստան աշխարհի և սփիւռքի գրադարաններու միջեւ ստեղծուած այս
համագործակցութեան գաղափարին և առնուած քայլերուն համար, մեր

խորին երախտագիտութիւնը կը յայտնենք, որովհետեւ այս մէկը մեծ բարիք մը եղաւ Զմմառու վանքի գրադարանին համար, որ իր կարեւորութեամբ աշխարհիս հայ մշակոյթի հինգերորդ կեդրոնը կը նկատուի:

Յարգելի ներկաներ

Զմմառու Մատենադարանի ձեռագիր և տպագիր գրականութիւնը Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան և Զմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութեան, գրական-մշակութային երեքդարեան գործունէութեան արգասիքն է:

Ինչպէս գիտէք 18-րդ դարու սկիզբը, հայրենի հողէն հազարաւոր մղոններ հեռու, հայութիւնը զանազան գաղութներու մէջ յաջողեցաւ ստեղծել իւրայատուկ արուեստ, գրականութիւն և մտաւորական կեանք: Այն օրերուն երբ Արեւմուտքի մէջ հիմը կը դրուէր Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան, Արեւելքի մէջ, Լեոնալիբանանի մէկ բլրակին վրայ հիմը կը դրուէր Զմմառու վանքին: Այդ օրերէն Զմմառու վանքի Միաբանութիւնը, Հայ Անտոնեան¹ Միաբանութեան հետ միասին պահեց, պահպանեց հայ մատենագիրներու, պատմագիրներու, թարգմանիչներու, գիտնականներու թանկարժէք ձեռագիրներն ու տպագիր ժառանգը: Գիրքերու սկզբնաւորութեան կամ վերջաւորութեան գրուած յիշատակարանները, ցոյց կու տան թէ մեր միաբանները ինչպիսի գոհողութիւններով գտած են 16-րդ և 17-րդ դարերու հնատիպ գիրքերը եւ գուրգուրանքով պահելէ ետք բերած ու նուիրած են վանքի մատենադարանին: Աւելի ուշ, միաբան հայրեր իրենց անհատական գրադարանները ամբողջութեամբ նուիրած են Զմմառու վանքի Մատենադարանին:

Այսօր համայն հայութիւնը ի Մայր Հայաստան և ի սփիւռս աշխարհի երբ կը պատրաստուի յիշատակելու Մեծ Եղեռնի հարիւրամեակը, կարդամ ձեզի այդ օրերուն գրուած օրագրութիւնը, զոր պահպանուած է Զմմառու վանքի արխիւներուն մէջ. «1915 թուին Ապրիլ ամսուն օսմանցի

¹ Լեոնալիբանանի Քսրուան գաւառի արեւմտեան կողմը գտնուող Քրէյմի վանքը 18-րդ դարուն սկիզբը հիմնուած է հայ կաթողիկէ Անտոնեան կրօնաւորներու Միաբանութեան կողմէ: Անտոնեան Միաբանութիւնը յետագային ճիւղաւորումներ ունեցաւ Կ.Պոլսոյ և Հռոմի մէջ:

գինուորականներ յաճախակի խուզարկություններ կը կատարէին, գիշերը կը պաշարէին վանքը, «վանքին դռները բացէ՛ք կը գոռային» - զօրապետ և զօրքեր - «ապա թէ ոչ կը խորտակենք»: Կը խուժէին ներս սոսկում և սարսափ սփռելով...»: Այդ օրը «ստիպուեցանք այլևս վանքին դիւանը, պահարանի թանկագին զգեստներն ու իրեղենները «Մար Շալիթա»² տանիլ գիշեր ժամանակ: Ձեռագիրներէն, գիրքերէն և թագերէն մաս մը...խոնաւութենէն փտեցան: Կարծես ամենէն աւելի ապահով վանքեր ու բարեկամներ հայ անուան վախէն թշնամի դարձեր էին: Չէին ուզեր բան մը պահել իրենց քով. Մար Շալիթայի վանքը միակն էր, որ միշտ հաւատարիմ մնաց հայուն...»:

Զմմառու Միաբանութիւնը Մեծ Եղեռնի օրերուն հաւատարիմ մնալով իր կոչումին և առաքելութեան իր կարելին ըրաւ, որպէսզի փրկէ հայ ժողովուրդի մշակութային հարստութիւնը և գանձերը:

Մեծ Եղեռնէն 100 տարի ետք, այսօր 21-րդ դարու սեմին, հայութիւնը իր կեանքի զանազան բնագաւառներուն մէջ ահաւոր դժուարութիւններ կը գրաւէ. ազգային միութիւններ, հաստատութիւններ, կազմակերպութիւններ, կրթական օճախներ կամաց կամաց կը դատարկուին:

Սփիւռքի հայկական կեանքը, հայու ստեղծական ոգին, հայեցի դաստիարակութիւնը, հայոց լեզուն, հայ միտքը, այլ խօսքով հայ մշակոյթը, ինչպէս նաեւ մեր հայրերու քրիստոնէական հաւատքը նահանջ մը կ'արձանագրէ: Դառն օրեր կ'ապրինք, մտահոգ ենք մեր անմիջական ներկայով և գալիք անորոշ ապագայով: Սակայն հակառակ հայութեան դիմագրաւած դժուարութեանց, յատկապէս Մերձաւոր Արեւելքի մէջ, Զմմառու վանքի վարչական խորհուրդը, գլխաւորութեամբ Մեծաւոր Հօր՝ Ն. Գաբրիէլ Թ.Ծ.Վ. Մուրատեանի, ձեռնմուխ եղաւ վանքիս մատենադարանի վերանորոգ բաժին փոխադրութեան աշխատանքին:

Երկու տարի առաջ, տեղեկացուցած էի ձեզի թէ Զմմառու վանքի Մատենադարանի հնատիպ գիրքերու ցուցակագրման աշխատանքները սկիզբ առած են: Նոյն թուականին 2012 Նոյեմբեր 27-ին, Հայաստանի

² Մար Շալիթա վանքը Զմմառու վանքին մօտ գտնուող Մարօնիթ համայնքի պատկանող վանք մըն է, որ սերտ յարաբերութեան մէջ կը գտնուէր հայ հոգեւորականներուն հետ:

Հանրապետության Նախագահ՝ Վսեմաշուք Պրն. Սերժ Սարգսեանի այցելութիւնը Ձմմառու վանք, պատմական նշանակութիւն ունեցաւ: Այդ առթիւ՝ տեղի ունեցաւ Ձմմառու վանքի Մշակութային նոր կեդրոնի բացումը, վանքի հիմնովին նորոգուած հնագոյն բաժնին մէջ, ուր Հայ Գիրքի տպագրութեան 500-ամեակի առթիւ վանքիս Ձեռագիրներու եւ Հնատիպ Գիրքերու ցուցահանդէս կազմակերպուեցաւ: Նոյն օրը Մաշտոցի անուան Մատենադարանի եւ Ձմմառու վանքի միջեւ կնքուեցաւ համագործակցութեան համաձայնագիր մը: Այնուհետեւ Ձմմառու վանքի ամենակարեւոր եւ էական իրագործումը եղաւ մատենադարանիս փոխադրութիւնը վերանորոգ բաժնին մէջ:

Նոր Մատենադարանի շինութիւնը իր յարակից բաժիններով սկսած է 18-րդ դարու կիսուն, Միքայէլ Պետրոս Գ. Գասպարեան եւ Գրիգոր Պետրոս Ե. Քիւրեղեան կաթողիկոսներուն օրօք եւ աւարտին հասած է 1810ին:

Երկար ժամանակ հնատիպ եւ վաղ շրջանի գիրքերը, պահպանուած էին միաբան հայրերու տրմադրուած զանազան խուցերու եւ պահարաններու մէջ: Երկու տարուայ ժրաջան աշխատանքէ ետք՝ հնատիպ եւ վաղ շրջանի գիրքերը միատեղ համախմբեցինք եւ զետեղեցինք մասնաւոր բաժնի մը մէջ: Մատենադարանի Հնատիպ եւ Վաղ շրջանի գիրքերու դասաւորումը եւ համարակալումը կը կատարուի մասնագէտ պաշտօնեաներու կողմէ «Dewey» միջազգային համակարգի դրութեամբ: Երբ գիրքերու ցուցակագրումը իր աւարտին հասնի, համացանցի վրայ պիտի գտնենք Ձմմառու Վանքի ելեկտրոնային մատենադարանի հայերէն եւ անգլերէն վերնագրով գիրքերը իրենց մանրամասնութեամբ: Իսկ որպէս ապագայի ծրագիր՝ պիտի թուայնացուին կարելորագոյն գիրքերը, որպէսզի մեր ժողովուրդի զաւակներուն մատչելի ըլլան:

Երկու տարուան մեղուաջան աշխատանքէ ետք, հայերէն հնատիպ գիրքերու ցուցակագրման աշխատանքը գրեթէ իր աւարտին հասած է եւ հետեւեալ պատկերը կը ներկայացնէ.

1568-էն 1700	71 գիրք
1701-էն 1800	263 գիրք
1801-էն 1920	2505 գիրք

Ուրեմն 1568-էն 1920-ի միջեւ 2849 հնատիպ գիրքեր ունինք մեծ մասամբ հայերէն: Այս գիրքերը ունին իրենց կրկնօրինակները, որով ամբողջ թիւը կը հասնի 8497-ի: Հայերէնի կողքին մինչեւ հիմա արձանագրուած է 880 լատիներէն հնատիպ գիրք: Դիտելի է թէ օտար լեզուներով հրատարակուած գիրքերու արձանգրութիւնը, յատկապէս լատիներէնը, աւելի ժամանակի կը կարօտի:

Զմմառու գրադարանը հարուստ է հնատիպ ժամագիրքերով, Մաշտոցներով, խորհրդատետրերով, ճաշոցներով եւ Յայսմաւուրքներով: Ինչպէս նաեւ Իմաստասիրական, Բնագիտական, բժշկագիտական, թուաբանական, աշխարհագրական, պատմական, երաժշտական, հոգեւոր-բարոյական գիրքերով:

Դարերու խորերէն եկող Հայ պատմագիրներու, թարգմանիչներու, գիտնականներու ձեռագիրները տպագրուելով փրկուեցան կորուստէ, այժմ հայ հնատիպ գրքերու մատենագիտական ցուցակը պատրաստելէ ետք մեզի կը մնայ այդ նուիրական աւանդը պահպանել և փոխանցել նոր սերունդին:

Միբելիներ

Այս համաժողովին կու գամ յայտնելու թէ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան և Զմմառու վանքի մշակութային հարստութեան յայտնաբերումը յարատեւ աշխատանքի, ժամանակի և մարդուծի կը կարօտի: Միաբանութեան պատկանող կանոնագրեր, դիւանական գրութիւններ, Հայրապետական Կոնդակներ, հնատիպ քարտէսներ, օրացոյցեր, հմայելիներ, տեղեկագրեր, ատենագրութիւններ, ուղերձներ, օրագրութիւններ, Հայ ժողովուրդի պատմութեան մէկ մասունքն են, որ արժանի են մանրամասն ուսումնասիրութեան և յայտնաբերման:

Մեր նպատակն է որ մեր գրադարանի գիրքերու ցուցակագրման աշխատանքէն ետք, Զմմառու Հայոց վանքը, որ ընդունուած է իբրեւ աշխարհիս հայ մշակոյթի հինգերորդ կեդրոնը, սփիւոքահայ իրականութեան մէջ, մշակութային արժէքներու պահպանման և ուսումնասիրութեան օճախներէն մին ըլլայ, պատրաստ ընդունելու շրջանէն ընթերցասէր հայորդիներ և հայագիտութեամբ հետաքրքրուող անձնաւորութիւններ:

Գրադարաններու այս համագործակցութիւնը մշակութային արժէքներու պահպանման ուղղութեամբ անհրաժեշտ քայլ մըն է:

Խորապէս կը հաւատամ, որ մեր այս հանդիպումը պատմական մեծ նշանակութիւն կ'ունենայ, որովհետեւ մեր երկար տարիներու երազանքներու իրականացումն է: